Նոտարական ակտի կոդ: 609-20170413-37-1160631
Նոտարական ակտի գաղտնագիր: DZK0TV

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ՝ ԲՆԱԿԱՐԱՆԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետություն, Սյունիքի մարզ, քաղաք Կապան

Երկու հազար տասնյոթ թվականի ապրիլի տասներեքին

ՀՀ քաղաքացի ԼԵՆԱ ՄԱՐՏԻՐՈՍԻ ՍԱՐԳՍՅԱՆԸ, ծնված՝ 02/01/1954թ., անձնագիր՝ AH0482647, տրված 041-ի կողմից, տրման ամսաթիվը՝ 14/01/2008, հաշվառված՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Կապան, Ա. Մանուկյան 1-ին նրբ, շ. 3, բնակարան 22, հանդես գալով իր և ՌԴ քաղաքացի ԼԵՎՈՆ ՍԱՇԱՅԻ ԳԱԼՍՏՅԱՆԻ անունից 23/03/2017թ. Մոսկվա քաղաքի նոտար Պլոտնիկովա Անֆիսա Վլադիմիրովնայի կողմից հաստատված լիազորագրով՝ գրանցում N 3-1097,

ՀՀ քաղաքացի ՆԵԼԼԻ ՍԱՇԱՅԻ ԳԱԼՍՏՅԱՆԸ, ծնված՝ 08/05/1975թ., անձնագիր՝ AH0393393, տրված 041-ի կողմից, տրման ամսաթիվը՝ 14/01/2008, հաշվառված՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան փ., շ. 14, բնակարան 23, այսուհետև ,,ՎԱՐՁԱՏՈՒՆԵՐ,,

և Հայաստանի Հանրապետությունն, այսուհետև ,,ՎԱՐՁԱԿԱԼ,,, ի դեմս Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության գլխավոր հարկադիր կատարողի ժամանակավոր պաշտոնակատար Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ, որի անունից 07/04/2017թ. տրված լիազորագրով հանդես է գալիս ԴԱՀԿ Սյունիքի մարզային բաժնի Կապան-Մեղրի տարածաշրջանային բաժանմունքի պետ, ՀՀ քաղաքացի ՀԱԿՈԲ ԿԻՄԻ ՂԱՎԱԼԲԱԲՈՒՆՑԸ, ծնված՝ 22/07/1970թ., անձնագիր՝ AM0341065, տրված 045-ի կողմից, տրման ամսաթիվը՝ 20/06/2011, հաշվառված՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Մեղրի, Զ. Անդրանիկի փ., շ. 26, բնակարան 23, կնքում են սույն պայմանագիրը հետևյալի մասին.

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.Սույն պայմանագրով Վարձատուները պարտավորվում են վճարի դիմաց Վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել *Սյունիքի մարզի Կապան համայնքի Արամ Մանուկյան փողոցի 1 նրբանցքի 3 /երեք/ շենքի 22 /քսաներկու/* համարի բնակարանը և շենք-շինության համասեփականատերերին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող ընդհանուր օգտագործման տարածքների նկատմամբ իրավունքի համապատասխան մասը:

2.Նշված անշարժ գույքը սեփականության իրավունքով պատկանում է ,,Վարձատուներին,, 26/07/2016թ. ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի ,,Կապան,, սպասարկման գրասենյակից տրված N 26072016-09-0016 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականով:

3.Նշված գույքը վաճառված չէ, գրավի, արգելանքի, կալանքի տակ չի գտնվում կամ այլ կերպ օտարված չէ, որը հաստատված է 13/04/2017թ. ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի ,,Կապան,, սպասարկման գրասենյակից տրված N US-13042017-09-0280 միասնական տեղեկանքով:

4.Սույն պայմանագրից բխող իրավունքներն ու պարտականությունները տարածվում են կողմերի վրա *սկսած սույն թվականի ապրիլի տասներեքից և պայմանագիրը գործելու է անորոշ ժամանակով*:

5. Կողմերի համաձայնությամբ բնակարանի ամսական վարձավճարը կազմում է՝ *55,000 /հիսունհինգ հազար/* դրամ, ներառյալ նաև հարկային պարտավորությունները, որը ենթակա է վճարման *մինչև յուրաքանչյուր հաջորդ ամսվա տասնհինգը*:

6.Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ սույն պայմանագիրը կարող է դադարեցվել այդ մասին առնվազն երեք ամիս առաջ մյուս կողմին տեղեկացնելով:

7.Պայմանագրի տևողության ընթացքում վարձավճարը և ժամկետը փոփոխման ենթակա են կողմերի համաձայնությամբ:

ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վարձատուն իրավունք ունի՝

1.Վարձակալից պահանջել գույքն օգտագործելու սույն պայմանագրի պայմաններին համապատասխան:

2.Պահանջել լուծելու պայմանագիրը և հատուցելու վնասները, եթե Վարձակալը Գույքից օգտվում է պայմանագրի պայմաններին կամ Գույքի նշանակությանն անհամապատասխան:

Վարձատուն պարտավոր է՝

4.Գույքը Վարձակալին տրամադրել սույն պայմանագրի պայմաններին և Գույքի նշանակությանը համապատասխանող վիճակում:

5.Վարձակալին նախազգուշացնել Գույքի նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների մասին

Վարձակալն իրավունք ունի՝

6.Պահանջել Վարձատուից սույն պայմանագրի կնքման պահից իրեն հանձնել Գույքը (փոխանցման ակտով):

Վարձակալը պարտավոր է՝

7.Ժամանակին վճարել գույքն օգտագործելու համար նախատեսված վճարը (վարձավճարը):

8.Պայմանագիրը վաղաժամկետ կարող է լուծվել վարձատուի պահանջով, եթե պայմանագրում սահմանված վճարման ժամկետը լրանալուց հետո երկու անգամից ավելի չի մուծվել վարձավճարը:

9.Պայմանագիրը դադարելու դեպքում Վարձատուին վերադարձնել Գույքն իր կողմից ստացված վիճակում՝ հաշվի առնելով դրա բնական մաշվածությունը:

10.Իր մեղքով վարձակալած գույքին հասցված վնասը վերականգնել սեփական միջոցներով:

11.Ապահովել իր զբաղեցրած գույքին (տարածքին և շինությանը) հարող ընդհանուր օգտագործման տարածքի հակահրդեհային, սանիտարական պատշաճ վիճակը ճարտարապետական տեսքը:

12.Վարձակալն իրավունք ունի բնակարանը հանձնել ենթավարձակալության միայն վարձատուի համաձայնությամբ:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.Վարձակալության ժամանակահատվածում Կոմունալ վճարումները և (էլ. էներգիա հեռախոս, ջրամատակարարում) կատարվելու են ,,*Վարձակալի*,, կողմից:

2.Սեփականության իրավունքի փոխանցումն այլ անձի հիմք չէ վարձակալության պայմանագիրը լուծելու կամ փոփոխելու համար:

3.Սույն պայմանագրի ձևակերպման հետ կապված ծախսերը կատարվում է ,,ՎԱՐՁԱԿԱԼ կողմից:

4.Պայմանագիրը կնքված է համարվում կողմերի ստորագրման պահից և իրավական ուժ է ստանում օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից:

5.Պայմանագրի գործողության ընթացքում առաջացած վեճերը կարգավորվում են հաշտարարի միջոցով:

6.Կողմերը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն են կրում սույն պայմանագրով իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

7.Սույն պայմանագիրը կողմերի ներկայությամբ նոտարի կողմից ընթերցվեց բարձրաձայն և պարզաբանվեց գործող օրենսդրության նորմերը:

8.Սույն պայմանագիրը կազմված և հաստատված է հայերեն լեզվով, չորս օրինակից, որից մեկ օրինակը պահվում է ,,Կապան,, նոտարական տարածքում, իսկ մյուսները տրվում են կողմերին: Օրինակների միջև հակասությունների դեպքում նախապատվությունը տրվում է նոտարի մոտ պահվող օրինակին:

Սույն պայմանագրից բխող իրավունքները *30-օրյա ժամկետում ենթակա են պետական գրանցման* ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի ստորաբաժանումում:

ՎԱՐՁԱՏՈՒՆԵՐ՝

Լ. Մ. ՍԱՐԳՍՅԱՆ

Լ. Ս. ԳԱԼՍՏՅԱՆԻ լիազորված անձ՝

Ն. Ս. ԳԱԼՍՏՅԱՆ

ՎԱՐՁԱԿԱԼ՝

ՀՀ, ի դեմս ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայության գլխավոր հարկադիր կատարողի

Ժ/պ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ լիազորված անձ՝

Երկու հազար տասնյոթ թվականի ապրիլի տասներեքին

Սույն պայմանագիրը վավերացված է իմ՝ Կապան նոտարական տարածքի նոտար ՎԻԵՆՆԱ ԿԱՄՈՅԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՍ կողմից: Կողմերը պայմանագիրը ստորագրել են իմ ներկայությամբ: Պայմանագիրը ստորագրած անձանց ինքնությունը, նրանց գործունակությունը, ինչպես նաև իրավաբանական անձի իրավունակությունը, նրա ներկայացուցչի լիազորությունները և գույքի նկատմամբ սեփականատիրոջ իրավունքները ստուգված են: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 563 հոդվածին համապատասխան, սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Գրանցված է սեղանամատյանում 1159

Գանձված է պետական տուրք մեկ հազար ՀՀ դրամ և ծառայության վճար ութ հազար ՀՀ դրամ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Վիեննա Հայրապետյան

Նոտարական ակտի կոդ: 609-20170421-66-1184453
Նոտարական ակտի գաղտնագիր: FTBGOX

Համապատասխան մարմիններին

ՀՀ քաղ. ԼԵՆԱ ՄԱՐՏԻՐՈՍԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՑ, ծնված՝ 02/01/1954թ., անձնագիր՝ AH0482647, տրված 041-ի կողմից, տրման ամսաթիվը՝ 14/01/2008, հաշվառված՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Կապան, Ա. Մանուկյան 1-ին նրբ., շ. 3, բն. 22, ով հանդես է գալիս իր և ՌԴ քաղ. ԼԵՎՈՆ ՍԱՇԱՅԻ ԳԱԼՍՏՅԱՆԻ անունից, 03/03/2017թ. Մոսկվա քաղաքի նոտար Պլոտնիկովա Անֆիսա Վլադիմիրովնայի կողմից հաստատված լիազորագրով՝ գրանցում թիվ 3-1097,

ՀՀ քաղ. ՆԵԼԼԻ ՍԱՇԱՅԻ ԳԱԼՍՏՅԱՆԻՑ, ծնված՝ 08/05/1975թ., անձնագիր՝ AH0393393, տրված 041-ի կողմից, տրման ամսաթիվը՝ 14/01/2008, հաշվառված՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան փ., շ. 14, բն. 23

Դ Ի Մ Ո Ւ Մ

Հայաստանի Հանրապետություն, Սյունիքի մարզ, քաղաք Կապան

Երկու հազար տասնյոթ թվականի ապրիլի քսանմեկին

Մենք՝ ԼԵՆԱ ՄԱՐՏԻՐՈՍԻ ՍԱՐԳՍՅԱՆՆ, հանդես գալով իմ և ԼԵՎՈՆ ՍԱՇԱՅԻ ԳԱԼՍՏՅԱՆԻ անունից և ՆԵԼԼԻ ՍԱՇԱՅԻ ԳԱԼՍՏՅԱՆՆ, համաձայն ենք, որպեսզի 13/04/2017թ. Կապան նոտարական տարածքի նոտար Վիեննա Կամոյի Հայրապետյանի կողմից հաստատված մեր և Հայաստանի Հանրապետության, ի դեմս ՀՀ ԱՆ դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության, միջև կնքված Անշարժ գույքի՝ բնակարանի վարձակալության պայմանագրով սահմանված բնակարանի ամսական վարձավճարները փոխանցվեն Լենա Մարտիրոսի Սարգսյանի անվամբ <<Ամերիաբանկ>> ՓԲԸ-ում բացված թիվ 15700 25892480200 հաշվեհամարին:

Համաձայնության տեքստը բարձրաձայն ընթերցվեց նոտարի կողմից և պարզաբանվեց գործող օրենսդրության նորմերը:

Լ. Մ. ՍԱՐԳՍՅԱՆ

Լ. Ս. ԳԱԼՍՏՅԱՆԻ լիազորված անձ՝

Ն. Ս. ԳԱԼՍՏՅԱՆ

Երկու հազար տասնյոթ թվականի ապրիլի քսանմեկին

Ես՝ Կապան նոտարական տարածքի նոտար ՎԻԵՆՆԱ ԿԱՄՈՅԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆՆ հաստատում եմ քաղ. ԼԵՆԱ ՄԱՐՏԻՐՈՍԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ և ՆԵԼԼԻ ՍԱՇԱՅԻ ԳԱԼՍՏՅԱՆԻ ստորագրությունների իսկությունը, որոնք կատարվել են իմ ներկայությամբ: ,,ՀՀ Նոտարիատի մասին օրենքի,, 67 հոդվածի համաձայն, հաստատում եմ որոշակի անձանց կողմից կատարված ստորագրությունների իսկությունը, այլ ոչ թե փաստաթղթում շարադրված փաստերը:

Փաստաթուղթը ստորագրողների ինքնությունը ստուգված է:

Գրանցված է սեղանամատյանում 1249

Գանձված է պետական տուրք հինգ հարյուր ՀՀ դրամ և ծառայության վճար երեք հազար ՀՀ դրամ համաձայն՝ «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Վիեննա Հայրապետյան

AMERIABANK

ՀԱՅՏԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄ
APPLICATION RECEIPT

Հարգելի/Dear Սարգսյան Լենա Մարտիրոսի / LENA SARGSYAN

Շնորհակալություն «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) ծառայություններից օգտվելու համար:
Ձեր կողմից 14/04/2017թ. Բանկնեերկայացված հայտն ընդունված է:

Տեղեկացնում ենք, որ Ձեզ համար Բանկում բացվել է (են) հետևյալ հաշիվ(ներ)ը.

Thank you for using Ameriabank CJSC (hereinafter "the Bank") services.
The Bank has accepted your application dated 14/04/2017.

Please be informed that the Bank has opened the following account(s) for you:

Հաշվեհամար/Account number	Հաշվի արժույթ Account currency	Հաշվի տեսակ Account type
15700 25892480200	ՀՀԴ/AMD	Քարտային հաշիվ

Ձեր քարտի տվյալներն են.
Details of your card are:

Քարտի տեսակ *Card type*	Դեբետային (Օվերդրաֆտի հնարավորությամբ) / Debit (with possibility of overdraft)	*Քարտի ենթատեսակ* *Card sub-type*	Visa Electron AMD
Քարտի արժույթ *Card currency*	ՀՀԴ/AMD		

ՄԻԱՅՆ ԲԱՆԿԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ / FOR BANK USE ONLY

Հայտի ընդունման ամսաթիվ	14/04/2017թ.	Ընդունող աշխատակցի անուն, ստորագրություն	Մերի Բաբայան